



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՂՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 14 » _____ 09 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-368

Սեպտեմբերի 7-ից սեպտեմբերի 13-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Սեպտեմբերի 7-8-ին՝ կեսօրից հետո, առանձին շրջաններում դիտվել է ամպրոպ, ուժեղ քամի՝ 14-15մ/վրկ արագությամբ, պողոթման ժամանակ՝ 19-25մ/վ արագությամբ: Սեպտեմբերի 9-ի գիշերը՝ տեղ-տեղ, 10-ի գիշերը՝ առանձին շրջաններում դիտվել է անձրև, ամպրոպ՝ մինչև 11մմ քանակությամբ: 9-ին՝ Մարտունիում դիտվել է 5մմ տրամագծով կարկուտ:

11-ի ցերեկը, 12-ին առանձին շրջաններում դիտվել է 1-5մմ քանակությամբ անձրև և ամպրոպ: 11-ին՝ Արմավիրում դիտվել է 14մ/վրկ արագությամբ քամի, պողոթման ժամանակ՝ 18մ/վրկ արագությամբ: 12-ին Սիսիանում դիտվել է 6մմ տրամագծով կարկուտ:

13-ին, միայն, Ջերմուկում է ամպրոպ դիտվել, Որոտանում՝ 2մմ քանակությամբ անձրև:

Օդի միջին օրական ջերմաստիճանը նորմայից բարձր է եղել սեպտեմբերի 7-ին և 13-ին 4-6 աստիճանով, 8-11-ին՝ 1-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 7-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում դիտվել է +34...+38°C, Տավուշում Սյունիքի հովիտներում +28...+33°C, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +25...+30 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում գրանցվել է սեպտեմբերի 13-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +7...+12 °C (Աշոցքում՝ +4°C Մասրիկում, Գավառում, Սիսիանում՝ +5°C, Ապարանում՝ +6°C), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +14...+18°C (Դիլիջանում՝ +10°C, Արմավիրում, Կապանում՝ +13°C):

Սեպտեմբերի 7-9-ին Երևանում դիտվել է քամի՝ 6-9մ/վրկ արագությամբ, պողոթման ժամանակ՝ 15-18մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով և կազմել 1900.66 մ (13.09.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 4 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան

*Տնօրենի տեղակալ
Գագիկ Սուրենյան, Հեռ.՝ 012 31 79 29*